ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, քարտուղարություն, հեռ. 596-125

N 27/1707 «19» 12 2022 թ.

Ձեր

Մոսէսքո ՍՊԸ (ՀՎՀՀ 04214892)
Ք. Երևան, Նար-Դոս 75
Հեռ.՝ 010 57 10 75
էլ. հասցե՝ llcmosesco@gmail.com

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ոստիկանության և Մոսէսքո ՍՊԸ-ի միջև 30.09.2022 թվականին կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎ/ՀԱԿԱՍԱՌԻՉ/Ա-105 ծածկագրով հակասառեցուցիչ նյութերի ձեռք բերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Մոսէսքո ՍՊԸ-ն չի կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես՝ վերոգրյալ պայմանագրով մատակարարը մատակարարել է տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապակիների լվացման հակասառեցուցիչ հեղուկ, մատակարարին պայմանագրի 2-րդ կետի համաձայն հնարավորություն է տրվել կատարել շտկում և մատակարարել պայմանագիր տեխնիկական բնութագրին համապատասխանող ապակի լվացման հակասառեցուցիչ հեղուկ, սակայն նրա կողմից որևէ շտկում չի կատարվել:

Համաձայն Պայմանագրի 2.1.2-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է պայմանագով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ոստիկանության և Մոսէսքո ՍՊԸ-ի միջև 30.09.2022 թվականին կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2022-ԱՎ/ՀԱԿԱՍԱՌԻՉ/Ա-105 ծածկագրով պայմանագիրը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Մատակարարի կողմից պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված պայմանագրի ապահովում՝ 103 600 /մեկ հարյուր երեք հազար վեց հարյուր/ ՀՀ դրամը և որակավորման ապահովում՝ 155 400 /մեկ հարյուր հիսունհինգ հազար չորս հարյուր/ ՀՀ դրամը, կներկայացվի «ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲ ընկերություն՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Սույն ծանուցումը հրապարակվելուց հետո 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում Մոսէսքո ՍՊԸ-ն պարտավոր է ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N 900005028106 հաշվեհամարին փոխանցել Պայմանագրի 6.3 կետերով նախատեսված տուգանք՝ 5 180 /հինգ հազար հարյուր ութսուն/ ՀՀ դրամ: Հակառակ դեպքում գումարները կգանձվեն դատական կարգով:

Մինչև 2022 թվականի դեկտեմբերի 23-ը ներառյալ Մոսէսքո ՍՊԸ-ի կողմից նշված գանձման ենթակա գումարները չվճարվելու դեպքում ընկերությունը կներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշվին և վճարված կտրոնների բնօրինակները ներկայացնել ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության գնումների համակարգման բաժին /ք. Երևան, Նալբանդյան 130/:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Վ.ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Կատարող՝ Ա. Սարգսյան

Հեռ.՝ 010-59-61-52